ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԸՇՁԲ-13/5

ք. Երևան 30.01.2014 թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը (այսուհետև՝ Հիմնարկ), ի դեմս Հիմնարկի տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Գ. Արշակյանի,, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Արագածոտնի մարզի Արագած գյուղի թիվ 1 դպրոցի վերակառուցման աշխատանքների** նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4՝ Եթե շինարարական աշխատանքների երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 7080000 (Յոթ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված ժամկետում Կապալառուի կողմից N1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրով մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 943000 (Ինը հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ (այսուհետև՝ պայմանագրային գումար), ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի ընդհանուր գնի և պայմանագրային գումարի միջև տարբերության չափով ծառայությունները կմատուցվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ՇԻԳ>>ՊՀ	<<ՀՀ նախագծերի պետական արտադերատեսչական
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,	փորձաքննություն» ՓԲԸ
կառավարական տուն 3	ք.Երևան, Տիգրան Մեծի պող., 4 շ.3-րդ հարկ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ <<Նաիրի>> մ/ճ
գործառնական վարչություն	Հ/Հ 2473700277210010
Հ/Հ 900087765, ՀՎՀՀ 02553861	ՀՎՀՀ 01508665
Տնօրեն Հ. Մարգսյան _____	Գործադիր տնօրեն Գ. Արշակյան _____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
30.01.2014 թ. կնքված N ԲԸԾՁԲ-13/5
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀՀ Արագածոտնի մարզի գ. Արագածի թիվ 1 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման

1	Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայության մատուցման բնութագիրը
	Աշխատանքների որակի /շինմոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում/ տեխնիկական հսկողության /այսուհետ՝ Հսկողություն/ ծառայության մատուցում
2	**Հսկողության ենթակա աշխատանքների անվանումը**
	Դպրոցի համաշինարարական աշխատանքներ. քանդման աշխատանքներ, նոր արտաքին պատերի կառուցում, ներքին աստիճաններ, տանիք /2-րդ մասնաշենք/, ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ, ներքին ջրամատակարարման և կոյուղու ցանցեր, ջեռուցման համակարգ, օդափոխության համակարգ, էլեկտրամոնտաժային աշխատանքներ, հրդեհային ազդարարման համակարգ, տեսահսկման համակարգ, հեռախոսային և համակարգչային ցանցեր, զահգային և ժամավորման ցանց: Կաթսայատան համաշինարարական աշխատանքներ. հողային աշխատանքներ, հիմքեր, հենապատեր, և հատակի սալ, տանիք, դուռ, պատուհան, հատակներ, հարդարման աշխատանքներ, արտաքին աստիճան, կաթսայատան սարքավորումներ, ջերմատեխնիկական մաս, պոմպակայան, էլեկտրամոնտաժային աշխատանքներ, արտաքին ջրամատակարարման և արտաքին կենցաղային կոյուղու ցանց, արտաքին ջերմային ցանց: Արտաքին լուսավորություն, տարածքի բարեկարգման աշխատանքներ:
3	**Տեխնիկական առաջադրանք**
	Հսկողության իրականացում Պատվիրատուի կողմից սահմանվող պարտավորությունների՝ ՀՀ կառ. 2011թ <Գնումների գործընթացի կազմակերպման մասին> թիվ 168-Ն որ. /69-րդ կետ/ պահանջի, ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ <Շինարարության որակի տեխնիկական հսկողության հրահանգ> թիվ 44 հրամանի համաձայն:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով կատարվող աշխատանքների համապատասխանության ապահովում նախագծային լուծումներին, շինարարական նորմերին ու կանոններին:
	Հսկողական /համատարած/ ստուգման միջոցով օգտագործվող նյութական ռեսուրսների որակը հավաստող փաստաթղթերի առկայության, ինչպես նաև օգտագործվող նյութերը, իրերը և կառուցվածքների որակը, աշխատանքների կատարման տեխնոլոգիաները ստանդարտներին, տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի այլ պահանջներին համապատասխանության ապահովում:
	Հսկողական ստուգման միջոցով իրականացվող աշխատանքների կատարման ժամկետների համապատասխանության, ինչպես նաև թերությունների բացահայտման և վերացման ապահովում
	Հսկողական չափագրությունների միջոցով փաստացի կատարված շինմոնտաժային աշխատանքների և նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ծավալների և հաշվարկների համապատասխանության ապահովում
	Կատարողական ակտի կազմման աշխատանքներին մասնակցության ապահովում, ամսական հաշվետվությունների ներկայացում:
4	**Ծառայությունների մատուցման ավարտի նախատեսում՝**

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	շինմոնտաժային աշխատանքների ավարտի հետ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>>ՊՀ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900087765, ԿՎՀՀ 02553861

Տնօրեն Հ. Սարգսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
<<ՀՀ նախագծերի պետական արտաքերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
ք.Երևան, Տիգրան Մեծի պող., 4 շ.3-րդ հարկ
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ <<Նաիրի>> մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ԿՎՀՀ 01508665

Գործադիր տնօրեն Գ. Արշակյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
30.01.2014 թ. կնքված N ԲՀՇՁԲ-13/5
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	ՀՀ Արագածոտնի մարզի Արագած գյուղի թիվ 1 դպրոցի վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	188600	188600	188600	565800	565800	565800	707300	707300	707300	943000	943000	943000	943000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ՄԻԳ>>ՊՀ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900087765, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն՝ Հ. Սարգսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<<ՀՀ նախագծերի պետական արտադերատեսչական
փորձաքննություն» ՓԲԸ
ք.Երևան, Տիգրան Մեծի պող., 4 շ.3-րդ հարկ
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ <<Նաիրի>> մ/ճ
Հ/Հ 2473700277210010
ՀՎՀՀ 01508665

Գործադիր տնօրեն Գ. Արշակյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
30.01.2014 թ. կնքված N ԲՀՇՁԲ-13/5
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
/30.01.2014 թ. կնքված N ԲԸԾՁԲ-13/5 պայմանագրի/

ք. Երևան 31.03.2017թ

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն >> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Արշակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1162-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ի միջև 30.01.2014թ. կնքված՝ ծառայության մատուցման N ԲԸԾՁԲ-13/5 ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների գինը, 2017 թվականի համար նախատեսված ֆինանսական հատկացումների շրջանակներում, սահմանել **235 700 (Երկու հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

1.1.2 Հաստատել ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N1-ի:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն ամաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017 թվականի համար նախատեսված շինմոնտաժային աշխատանքների ավարտը:

2.2 Սույն համաձայնագիրը հանդիսանում է 30.01.2014թ. կնքված N ԲԸԾՁԲ-13/5 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն համաձայնագրի N1 հավելվածը՝ կազմված 1 էջից, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե, Ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011011948, ՀՎՀՀ 02565827	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ Հալաբյան 41 ա <<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Նաիրի>> մասնաճյուղ Հ/Հ 2473700277210010, ՀՎՀՀ 01508665
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
Ա. Մկրտչյան ----------	Գ. Արշակյան ----------

Հավելված թիվ1
30.01.2014թ. կնքված N ԲԸԾՁԲ-13/5 պայմանագրի
թիվ 4 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
(Բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	ՀՀ Արագածոտնի մարզի գ.Արագածի թիվ 1 դպրոցի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություն	-	-	-	58 900	58 900	58 900	235 700	235 700	235 700	235 700	235 700	235 700	235 700

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

Պատվիրատու
ՀՀ Կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե,
Ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011948,
ՀՎՀՀ 02565827
Աշխատակազմի ղեկավար՝

Ա. Մկրտչյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող
«ՀՀ նախագծերի պետական
արտադերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ
Հալաբյան 41 ա
<<Արդշինբանկ>> ՓԲԸ,
<<Նաիրի>> մասնաճյուղ
Հ/Հ 2473700277210010,
ՀՎՀՀ 01508665
Տնօրեն՝

Գ. Արշակյան _____
(ստորագրություն)
Կ.Տ